



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ԱԽ-4-Ո-2
2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ԶՈՅԱ
ՕԶԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝ Ա. Ավագյանի
մասնակցությամբ՝ ԱԽ անդամներ՝ Կ. Ղարայանի, Կ. Մաղյանի, Հ. Խաչատրյանի,
Ա. Ավանեսյանի, Կ. Մարդանյանի, Ա. Լազարյանի,
Լ. Ասրյանի, Մ. Սաֆարյանի

մասնակցությամբ՝ դատավոր Գ. Գրիգորյանի,
քարտուղարությամբ՝ Գ. Հովհաննիսյանի,

2010 թվականի դեկտեմբերի 13-ին Ստեփանակերտ քաղաքում՝ դռնփակ նիստում, քննարկելով Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի միջնորդությունը՝ ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորներ Գայանե Գրիգորյանին, Զոյա Օհանյանին և Գրիգորի Հարությունյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.

Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի (այսուհետ Կարգապահական հանձնաժողով) 2010 թվականի հուլիսի 28-ի թիվ Կ-2-04/10 որոշմամբ ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորներ Գ. Գրիգորյանի, Զ. Օհանյանի և Գ. Հարությունյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել ԼՂՀ Ասկերանի շրջանի Դաշուշեն գյուղի բնակիչ Անահիտ Հայկի Գևորգյանի դիմումը:

2. Կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը.

Կարգապահական հանձնաժողովը, Արդարադատության խորհրդին է ներկայացրել եզրակացություն՝ կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող ներքոհիշյալ խախտման վերաբերյալ, որը հանձնաժողովը գնահատել է որպես դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ, որում առկա է դատավորների մեղքը:

Ըստ եզրակացության՝

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը /դատավոր Կ. Բեգլարյան/ 2010 թվականի մարտի 24-ին հրապարակել է թիվ 0040/05/2010թ. վարչական գործով կայացված վճիռը: Վճռի եզրափակիչ մասի համաձայն՝ վճիռը կարող էր բողոքարկվել ԼՂՀ Գերագույն դատարան հրապարակման պահից հետո՝ մեկամսյա ժամկետում:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ նույն օրենսգրքով:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով, շաբաթներով կամ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, շաբաթվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Նույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամիսներով հաշվարկվող դատավարական ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան օրը: Եթե ժամկետի վերջը համընկնում է համապատասխան ամսաթիվ չունեցող ամսվան, ապա դատավարական ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը: Իսկ 5-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ դատավարական ժամկետի վերջին օրն օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Ժամկետների հաշվարկման նույնանման կարգ է սահմանված նաև «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքով, որի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտերով սահմանված ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով:

Ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Իսկ 84-րդ հոդվածի համաձայն՝ եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Նշված դրույթներից ակնհայտ է, որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 2010 թվականի մարտի 24-ին հրապարակված վճռի բողոքարկման ժամկետի ընթացքը սկսվել է 2010 թվականի մարտի 25-ից, որը պետք է լրանար 2010 թվականի ապրիլի 27-ին, քանի որ 2010 թվականի ապրիլի 25-ը եղել է ոչ աշխատանքային օր (կիրակի օր), իսկ նշված ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ապրիլի 26-ը հանդիսացել է բողոքարկման ժամկետի վերջին օրը:

Վճռի դեմ բերված հայցվորի վճռաբեկ բողոքը ԼՂՀ Գերագույն դատարան է մուտքագրվել 2010 թվականի ապրիլի 26-ին, այսինքն՝ օրենքով սահմանված բողոքարկման մեկամսյա ժամկետի վերջին օրը:

ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորների կողմից 2010 թվականի մայիսի 5-ին որոշում է կայացվել հայցվորի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին՝ որպես ժամկետանց, արձանագրելով, որ տվյալ գործով վճիռն օրինական ուժի մեջ է մտել 2010 թվականի ապրիլի 23-ին:

Նման պայմաններում ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորների կողմից սխալ է հաշվարկվել վճռի բողոքարկման մեկամսյա ժամկետի հաշվարկը, որի պատճառով հայցվորի վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ որպես ժամկետանց:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման կարգի, հիմքերի և գործերի վարույթը Գերագույն դատարանում իրականացնելու վրա (mutatis mutandis) տարածվում են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով կամ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 246-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե՝ վճռաբեկ բողոք ներկայացվել է օրենքով նախատեսված ժամկետից ուշ, և բացակայում է այն վերականգնելու մասին միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է:

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք: Կարգապահական հանձնաժողովը գտնում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորներ Գ. Գրիգորյանը, Զ. Օհանյանը և Գ. Հարությունյանը թույլ են տվել դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ, ինչի արդյունքում Ա. Գրիգորյանին զրկել են դատական պաշտպանության իրավունքի իրականացումից:

Կարգապահական հանձնաժողովը գտնում է, որ դատական ակտը, որը պարունակում է դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ, չի կարող կայացվել դատավորի մեղքի բացակայությամբ: Տվյալ դեպքում դատավորների մեղավորությունն առկա է, քանի որ նրանք չեն դրսևորել բավարար ուշադրություն և շրջահայացություն, որի արդյունքում չեն պահպանվել արդարության և օրինականության սկզբունքները, և թույլ են տվել դատավարական իրավունքի ակնհայտ և կոպիտ խախտումներ:

3. Դատավորների բացատրությունում և պատասխանում բերված փաստարկները Կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ.

ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորներ Գ. Գրիգորյանը, Զ. Օհանյանը և Գ. Հարությունյանը 2010թ. օգոստոսի 4-ին Կարգապահական հանձնաժողովին ներկայացրել են բացատրություն հետևյալ բովանդակությամբ.

«Թիվ 0040/05/2010թ. վարչական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի 2010 թվականի մայիսի 5-ի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճռաբեկ

բողոքը ներկայացնելու ժամկետը մեր կողմից մեխանիկորեն սխալ է հաշվարկվել և բողոքարկվող վճռի օրինական ուժի մեջ մտնելու օր է նշվել 2010 թվականի ապրիլի 23-ը:

Քանի որ վճռաբեկ բողոքը ներկայացվել է 2010 թվականի ապրիլի 26-ին, ուստի որոշմամբ այն վերադարձրել ենք՝ որպես ժամկետանց»:

Դատավորներ Գ. Գրիգորյանը, Զ. Օհանյանը և Գ. Հարությունյանը 2010թ. օգոստոսի 30-ին Արդարադատության խորհրդին ներկայացրել են պատասխան՝ Կարգապահական հանձնաժողովի եզրակացության վերաբերյալ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Գտնում ենք, որ ԼՂՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի 24.08.2010թ. թիվ Կ-2-04/10 որոշումը և եզրակացությունը հիմնավորված չեն հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ դատական օրենսգրքի 104-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, եթե վարույթ հարուցող անձը որոշում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ դիմել Արդարադատության խորհրդին, ապա նա պետք է կազմի կարգապահական խախտման մասին եզրակացություն, որը պետք է նկարագրի դատավորի կողմից կատարված կարգապահական խախտում հանդիսացող յուրաքանչյուր արարք, ներկայացնի այդ արարքի կատարված լինելու հիմնավորումները, այդ թվում՝ կատարված արարքում դատավորի մեղքի առկայությունը և դրա տեսակը:

Կարգապահական հանձնաժողովը մեզ, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդության մեջ եզրահանգել է.

«Կարգապահական հանձնաժողովը գտնում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորներ Գ. Գրիգորյանը, Զ. Օհանյանը և Գ. Հարությունյանը թույլ են տվել դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ, ինչի արդյունքում հայցվորին զրկել են դատական պաշտպանության իրավունքի իրականացումից:

Կարգապահական հանձնաժողովը գտնում է, որ դատական ակտը, որը պարունակում է դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ չի կարող կայացվել դատավորի մեղքի բացակայությամբ: Տվյալ դեպքում դատավորների մեղավորությունն առկա է, քանի որ նրանք չեն դրսևորել բավարար ուշադրություն և շրջահայացություն, որի արդյունքում չեն պահպանվել արդարության և օրինականության սկզբունքները, և թույլ են տվել դատավարական իրավունքի ակնհայտ և կոպիտ խախտումներ»:

Փաստի առթիվ հարուցված կարգապահական վարույթի հետ կապված նյութերից հաստատված է, որ մեր կողմից նման խախտում թույլ է տրվել թյուրիմացության՝ ժամկետի մեխանիկորեն սխալ հաշվարկի հետևանքով: Նյութերում չկան հակառակը հիմնավորող այլ ապացույցներ:

Նման հանգամանքներում մեզ համար անհասկանալի է կարգապահական հանձնաժողովի եզրահանգումն այն մասին, որ մեր կողմից թույլ են տրվել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ /սակայն անհասկանալի է, թե այդ ինչ խախտումների մասին է խոսքը/:

Իրոք, մենք չենք ժխտում, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի քննության ընթացքում մեխանիկորեն թույլ ենք տվել օրենքի խախտում:

Սակայն առանց որևէ հիմնավորման, հանձնաժողովի անդամները, օգտագործելով հերթապահ եզրույթներ՝ ինչպիսիք են «բավարար ուշադրություն և շրջահայացություն չդրսևորելը», հանգել է անհիմն հետևության, որ մենք դիտավորությամբ ենք խախտումը թույլ տվել»:

ԼՂՀ Գերագույն դատարանի դատավոր Գ. Գրիգորյանը Արդարադատության խորհրդի նիստի ժամանակ տրված իր բացատրությունում ընդունել է, որ թիվ 0040/05/2010թ. վարչական գործով հայցվոր Ա. Գևորգյանի վճռաբեկ բողոքը վերադարձնելիս, թույլ են տվել օրենքի խախտում, սակայն դա եղել է թյուրիմացաբար:

ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորներ Զ. Օհանյանը և Գ. Հարությունյանը նիստին չէին ներկայացել անհարգելի պատճառով:

4. Կարգապահական պատասխանատվության հարցի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Արդարադատության խորհուրդը հիմք է ընդունում արձանագրված հետևյալ փաստերը.

1. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը թիվ 0040/05/2010թ. վարչական գործով կայացված վճիռը հրապարակել է 2010 թվականի մարտի 24-ին:

2. Թիվ 0040/05/2010թ. վարչական գործով կայացված վճռի դեմ բերված հայցվոր Անահիտ Գևորգյանի վճռաբեկ բողոքը ԼՂՀ Գերագույն դատարանում մուտքագրվել է 2010 թվականի ապրիլի 26-ին:

3. ԼՂՀ Գերագույն դատարանի վճռաբեկ պալատի 2010 թվականի մայիսի 5-ի որոշման համաձայն՝ Անահիտ Գևորգյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է որպես ժամկետանց, և արձանագրվել, որ բողոքարկվող վճիռն օրինական ուժի մեջ է մտել 2010 թվականի ապրիլի 23-ին:

4. ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ նույն օրենսգրքով:

Նույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով, շաբաթներով կամ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, շաբաթվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

ԼՂՀ վարչական օրենսգրքի 51-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ դատավարական ժամկետի վերջին օրն օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

5. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի կողմից 2010 թվականի մարտի 24-ին հրապարակված վճռի բողոքարկման ժամկետի ընթացքը սկսվել է 2010 թվականի մարտի 25-ից:

2010 թվականի ապրիլի 25-ը եղել է ոչ աշխատանքային օր (կիրակի օր), իսկ նշված ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ապրիլի 26-ը հանդիսացել է բողոքարկման ժամկետի վերջին օրը:

5. Արդարադատության խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննարկելով ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորներ Գ. Գրիգորյանին, Զ. Օհանյանին և Գ. Հարությունյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով Կարգապահական հանձնաժողովի անդամի զեկույցը, դատավոր Գ. Գրիգորյանի բացատրությունը, ուսումնասիրելով վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Արդարադատության խորհուրդը գտնում է, որ սույն գործով կիրառելի է ԼՂՀ դատական օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն

որի՝ եթե Արդարադատության խորհուրդը նպատակահարմար չի գտնում դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժի միջոց, ապա կարող է բավարարվել հարցի քննարկմամբ՝ որոշմամբ ամրագրելով կարգապահական պատասխանատվության հիմքերի առկայությունը և կարճելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը:

Սույն կարգապահական վարույթը Կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել է դատավորներ Գ. Գրիգորյանի, Զ. Օհանյանի և Գ. Հարությունյանի կողմից դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ կատարելու հիմքով:

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

ԼՂՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԼՂՀ-ում դատական իշխանությունն իրականացնում են դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպական դատարանն իր որոշմամբ արձանագրել է, /տես՝ Գարսիա Մանիբարդո ընդդեմ Իսպանիայի 15.01.2000թ. վճիռ/ որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի պարտադրում Անդամ պետություններին ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ: Սակայն, եթե այդպիսի դատարաններ գոյություն ունեն, 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքները պետք է լրացվեն, *inter alia*, տվյալ դատարաններին արդյունավետ մատչելիությամբ, այն հաշվով, որ վիճող կողմերը կարողանան ստանալ իրենց «քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին» վերաբերող որոշում:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման կարգի, հիմքերի և գործերի վարույթը Գերագույն դատարանում իրականացնելու վրա (*mutatis mutandis*) տարածվում են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով կամ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 246-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոք ներկայացվել է օրենքով նախատեսված ժամկետից ուշ, և բացակայում է այն վերականգնելու մասին միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է:

ԼՂՀ Սահմանադրության 113-րդ հոդվածի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն դատական մարմինը Գերագույն դատարանն է:

ԼՂՀ դատական օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն՝ Գերագույն դատարանի գործունեության նպատակն է ապահովել ԼՂՀ Սահմանադրության գերակայությունը և օրենքի միատեսակ կիրառությունը: Այդ առաքելությունն իրականացնելիս Գերագույն դատարանը պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը:

Պետք է նշենք, որ ԼՂՀ Գերագույն դատարանի՝ որպես դատական համակարգի համար բարձրագույն մարմնի, կառուցակարգային կարգավիճակը չպետք է խոչընդոտի օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը:

Վերոնշյալից հետևում է, որ դատական ակտի բողոքարկումն արդար դատաքննության իրավունքի տարր է, որը կոչված է ապահովելու վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերի արդյունավետ դատական հսկողությունը:

Սակայն ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորների կողմից սխալ է կատարվել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճռի բողոքարկման մեկամսյա ժամկետի հաշվարկը, որի պատճառով հայցվոր Ա. Գրիգորյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ որպես ժամկետանց, ինչի պատճառով վերջինս զրկվել է Սահմանադրությամբ նախատեսված դատական պաշտպատության իրավունքի իրականացումից:

Արդարադատության խորհուրդը գտնում է, որ օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ են արդարադատության իրականացման ընթացքում ԼՂՀ Սահմանադրության, օրենքների նորմերի այնպիսի էական խախտումները, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, դրանցից զրկելուն, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը խոչընդոտելուն և ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ և օրինական որոշման կայացմանը:

Ձեռք բերված ապացույցները վկայում են այն մասին, որ Գ. Գրիգորյանը, Զ. Օհանյանը և Գ. Հարությունյանը թույլ են տվել դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում:

Սույն կարգապահական վարույթը հարուցվել է Կարգապահական հանձնաժողովի կողմից դատավորների կողմից դատավարական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքով: Արդարադատության խորհուրդը գտնում է, որ այն դեպքում, երբ կարգապահական պատասխանատվության հիմք են դատավորի կողմից դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումները, որոնց առկայությունը ապացուցվում է կարգապահական պատասխանատվության գործի քննությամբ, Արդարադատության խորհուրդը էլնում է դատավորի մեղավորության կանխավարկածից, քանի որ դատական ակտերը, որոնք պարունակում են նյութական և դատավարական օրենքի նորմերի խախտումներ, չեն կարող կայացվել դատավորի մեղքի բացակայությամբ և ենթադրում են մեղքի որևէ տեսակի առկայություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ԼՂՀ դատական օրենսգրքի 109-րդ հոդվածով, 110-րդ հոդվածի 2-րդ մասով և 111-րդ հոդվածով՝ Արդարադատության խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորներ Գ. Գրիգորյանին, Զ. Օհանյանին և Գ. Հարությունյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը կարճել՝ բավարարվելով հարցի քննարկմամբ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Կ. ՍԱՂՅԱՆ

Մ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Լ. ԱՍՐՅԱՆ

Մ. ՍԱՖԱՐՅԱՆ